ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 492-Ա

ՆԱԶԵԼԻ ՎԱՐԴԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 1-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի նոյեմբերի 28-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022SGYEVE), սեփականատեր Նազելի Վարդանի Բարսեղյանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը. որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղու 2-րդ փողոցի 1-ին փակուղի 9/1 հասցեում գտնվող 04-065-0030-0035 կադաստրային ծածկագրով Նազելի Վարդանի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 57,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1969 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 113 808,20 (հարյուր տասներեք հազար ութ հարյուր ութ դրամ քսան լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 900325175157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 08
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42, paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2022 թվականի N 493-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասով, 685-րդ հոդվածի 1-ին մասով, 687-րդ և 689-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 102-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 2791/1 զեկուցագիրը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսահակ Գասպարյան փողոց 2 հասցեում գտնվող դպրոցի շենքը ներառող 04-094-0063-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա սպասարկման տարածքը, 04-094-0063-0005-001 կադաստրային ծածկագրով 968.2 քմ մակերեսով դպրոցը, 04-094-0063-0005-002 կադաստրային ծածկագրով 80.2 քմ մակերեսով կաթսայատունը, 04-094-0063-0005-003 կադաստրային ծածկագրով 16.7 քմ մակերեսով պահեստը, 04-094-0063-0005-004 կադաստրային ծածկագրով 2.5 քմ մակերեսով զուգարանը անհատույց օգտագործման իրավունքով 99 տարի ժամկետով տրամադրել «Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամին /պետական գրանցման համարը՝ 222.160.1274261, գրանցման ամսաթիվը՝ 2022 թվականի նոյեմբերի 3, ՀՎՀՀ՝ 04445077/:
2. «Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար Ամալյա Եղոյանի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3.Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման:
4.Սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 494-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինությունների հատակագծերը՝ տրված «ՋԻՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի նոյեմբերի 28-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022VPLRAK), շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը, տրված 01.12.2022թ-ին «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից, շինությունը կատարած անձ Նազելի Վարդանի Բարսեղյանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Մերձավան գյուղում, 41 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 19.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 1.3 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ՋԻՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի 2-րդ փողոց, 1-ին փակուղի 9/2 բնակելի տուն:

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Նազելի Վարդանի Բարսեղյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները, Նազելի Վարդանի Բարսեղյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Մերձավան գյուղի, Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1-ին փակուղի 9/2 հասցեում գտնվող 0,0041 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 41 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր բնակելի տան և պարսպի համար՝ 5907 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 124 637,70 (հարյուր քսանչորս հազար վեց հարյուր երեսունյոթ դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6.Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 4441,8 դրամ, որը 41 քառակուսի մետրի համար կկազմի 182 113,80 (հարյուր ութանասուներկու հազար հարյուր տասներեք դրամ ութանասուն լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 08

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 495-Ա

ՀԱՐԱՁԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներ՝ Սվետլանա Ալեքսանդրովնա Սամոյլովային, Սուսաննա Արամի Սարգսյանին, Սամվել Ալբերտի Եղոյանին, Շավարշ Վարազդատի Դալօղլանյանին և Նարինե Աշոտի Ստեփանյանին ցուցաբերել դրամական օգնություն, յուրաքանչյուրին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 9
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 496-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Գուրգեն Մանուկյանի 06.12.2022թ-ի N 3633 դիմումը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող 04-065-0037-0045 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության արտադրական գործառնական նշանակության 90 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 90 քառակուսի մետր մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի արտադրական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Հողամասին և շինությանը տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Մերձավան, Երևանյան խճուղու 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, 2 բնակելի տուն (ծածկագիր 04065WKSZTTH):
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42, paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 497-Ա

ՆԱԶԵԼԻ ԵՐՋԱՆԻԿԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ին N 498-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 9-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 28-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022PGSZHI), Նազելի Երջանիկի Նալբանդյանի կողմից 2022 թվականի հունվարի 10-ին տրված լիազորագիրը (գրանցված է սեղանամատյանում 36-ով), սեփականատեր Նազելի Երջանիկի Նալբանդյանի լիազոր անձ Ալին Շավարշի Շահինեանի 2022 թվականի նոյեմբերի 29-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի վարչական տարածքում գտնվող, Նազելի Երջանիկի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0054-0086 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող) հողամասի վրա կառուցված 29.8 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով կենցաղային տնտեսական շինությունը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԳԵՈՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կենցաղային տնտեսական շինության համար կազմում է 1969 դրամ, վճարման

ենթակա ընդհանուր գումարը կազմում է 58 676,20 (հիսունութ հազար վեց հարյուր յոթանասունվեց դրամ քսան լումա) ՀՀ դրամ:

3. Հողամասին և շինությանը տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Մ. Մաշտոցի փողոց թիվ 35 տնտեսական շինություն:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 09
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 498-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕԿ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից, սեփականատեր՝ Գնել Ախտոյանի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող Գնել Ախտոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0045-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.0437 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Այգեգործների փողոց N 16 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.0063 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Այգեգործների փողոց N 16/1 ավտոտնակ:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 499-Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 88-Ա որոշումը և համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ /բացառությամբ հողամասերի/ և շարժական գույքն աճուրդային եղանակով օտարելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2 արձանագրությունը. որոշում եմ՝

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ /բացառությամբ հողամասերի/ և շարժական գույքն աճուրդային եղանակով օտարելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող՝ /հիմք սեփականության իրավունքի վկայական՝ 04102022-04-0046, տրված 2022թվականի հոկտեմբերի 4-ին /գ. Մերձավան, Երկրագործների փողոց 9 հասցեում գտնվող՝ 04-065-0075-0003-001 կադաստրային ծածկագրով 63.2 քմ մակերեսով տնտեսական շինությունը, 04-065-0075-0003-002 կադաստրային ծածկագրով 70.2 քմ մակերեսով ծածկը և շինության զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ՝ 04-065-0075-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.3027 հա մակերեսով հողամասն /այսուհետ՝ Գույք/ օտարել աճուրդում հաղթող ճանաչված Արարատ Հարությունի Քառյանին 17699130 /տասնյոթ միլիոն վեց հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր երեսուն/ ՀՀ դրամով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ Գույքի համար վճարման ենթակա գումարի /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո աճուրդում հաղթող ճանաչված Արարատ Հարությունի Քառյանի հետ կնքել անշարժ գույքի առք ու վաճառքի պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ աճուրդի անցկացման օրվանից հաշված տաս օրվա ընթացքում սակարկությունների արդյունքում ձևավորված գինը չվճարելու դեպքում աճուրդը կհամարվի չկայացած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 500-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի N 22092022-04-0065, N 22092022-04-0066 վկայականները և սեփականատեր Շանթ Նշան Իպրահիմի Խնկիկյանի լիազորված անձ Էդգար Տոնականյանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Թահիրով գյուղի Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3 և Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/1 հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Արմավիրի մարզի Փարաքար համայնք, գյուղ Թահիրով Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 501-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Աստղիկ Մանուկյան» Ա/Ձ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 5-ին, համասեփականատեր՝ Ռազմիկ Զեյնալյանի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի վարչական սահմաններում գնտվող Ռազմիկ Զեյնալյանին և մյուսներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-069-0044-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.1181 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Վ. Մամիկոնյան փողոց N 27 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.114 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Վ. Մամիկոնյան փողոց N 29 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 502-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Հայկ Մաթևոսյան» Ա/Ձ-ի կողմից 2022 թվականի նոյեմբերի 21-ին, սեփականատեր՝ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0012-0004 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (բաժանվող մաս 3)՝ 0.489483 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի 2-րդ փակուղի N 4 վարչական շենք:
2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (բաժանվող մաս 2)՝ 1.258686 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի 2-րդ փակուղի N 4/2 շինություն:
3. Նույն հողատարածքի՝ կողմ 3-ին (բաժանվող մաս 1)՝ 0.783005 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի 2-րդ փակուղի N 4/1 շինություն:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 12
գ.Փարաքար